ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի տասնմեկ ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 34706.0 մլն դրամ՝ պլանավորված 32554.4 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.6 տոկոսով կամ 2151.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 27.3 տոկոսով կամ 7443.3 մլն դրամով:

Նոյեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4402.9 մլն դրամ՝ պլանավորված 4241.3 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 3.8 տոկոսով կամ 161.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 62.4 տոկոսով կամ 1692.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 108 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 47 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են շուրջ 16 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 23 ստուգում՝ 10 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները՝ ուղղված հարկ վճարողների կողմից ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման, պակասորդի հայտնաբերման, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման ու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման դեպքերի բացահայտմանը, որոնց արդյունքում արձանագրվել են խախտումների 23 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 122 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 85-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 17-ը՝ հացի արտադրության և իրացման փաստացի գների չափագրման, 5-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 3-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման ու ավելացված արժեքի հարկի հաշվարկի ճշտության և 9 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 30 վարչական գործ՝ շուրջ 281 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 51 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 40.8 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 93 վարչական գործով սահմանվել է շուրջ 1.2 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 385.2 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6020 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5422:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 47 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 99 վարձու աշխատողի՝ 14 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 53 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Մշակվել և ԱՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել հարկային օրենսդրությունում փոփոխություններ նախատեսող 18 օրենքների նախագծեր, որոնք ուղղված են նպատակային արտոնությունների կիրառմանը, արդյունավետ հարկային հսկողություն իրականացնելու հնարավորությունների ձևավորմանն ու հարկումից խուսափելու հնարավորությունների սահմանափակմանը, հարկման

հարաբերություններում միատեսակ մոտեցումների ամրագրմանն ու հարկային օրենսդրության կիրառության ընթացքում առաջ եկած խնդիրների լուծմանը:

Նոյեմբերի 16-ին ֆինանսների նախարարի առաջին տեղակալի գլխավորությամբ կայացել է աշխատանքային խորհրդակցություն հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվել են 2017 թվականի 9 ամիսների պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների պլան-առաջադրանքների կատարման ընթացքի, 4-րդ եռամսյակում կանխատեսվող մուտքերի, «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի շրջանակներում պարտավորությունների մարման գործընթացի ու «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգ»-ի շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ հարցեր: Խորհրդակցության ընթացքում հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվեց աշխատանքներ տանել հարկ վճարողների կողմից հարկեր-իրացման շրջանառություն հարաբերակցության, աշխատավարձերի և աշխատողների թվաքանակի իրական մեծությունների հայտարարագրման ուղղությամբ:

Հաշվետու ամսում հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության ու արհեստավարժության բարձրացման նպատակով հարկ վճարողների սպասարկման, հաշվառման և վերահսկողական գործառույթ իրականացնող թվով 68 աշխատակիցների համար կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ՝ «Հարկերի և պարտադիր վճարների հաշվարկում», «Հարկային ստուգումներ և հսկողություն», «Հարկային իրավախախտումների համար պատասխանատվություն, հարկային պարտավորությունների գանձում», «Տեղեկատվական տեխնոլոգիաները հարկային մարմնում» և «Հաշվապահական հաշվառման ստանդարտներ, հաշվապահական ձևակերպումներ» թեմաներով:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության երեք աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Երկու կառույցների միջև իրականացվել են նաև անուղղակի հարկերի

հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 618, ելքագրվել՝ 228 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**